

## ՏԻԳՐԱՆ ՍԻՋԱՅԵԼՅԱՆ

### ԼԵՈՆԱՐՈՏ ԳՅՈՒՂԻ (ԱՐԱԳԱՏՈՏՆԻ ՍԱՐՁ) ՍՈՏԱԿԱ ՋՐԱՆՅԶԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը դեռևս 80-ական թվականներին Արագածոտն մարզի Լեռնարոտ գյուղի մերձակա բարձրադիր գոտում, մի հին ջրանցքի մոտ հայտնաբերել էր արաբատառ արձանագրություն<sup>1</sup>:

Վերջերս մենք ուղևորվեցինք Լեռնարոտ՝ արձանագրությունը գտնելու և ուսումնասիրելու նպատակով:

Երկարատև որոնումներից հետո, գյուղի բնակիչների օգնությամբ, մեզ հաջողվեց գտնել արձանագրությունը՝ Չամբու կոչվող մի տեղանքում, Լեռնադռնից մոտավորապես չորս կիլոմետր հեռավորության վրա՝ ձորի ափին:

Արձանագրությունը պարսկերեն է, փորագրված գետնին տապալված մի քարե բեկորի վրա և բաղկացած է երեք տողից.

1. ۱۲۷۴

2. سنه سالم ؟


3. نهی

Թարգմանությունը՝

1. 1274 իջրի թվական 1858 թ.

2. տարի (.....)

3. ջրանցք /ջրատար/



Ըստ լեռնարտոցիների, հոսող ջուրը մոտակա ցածրադիր բնակավայրեր հասցնելու նպատակով, 1953 թ.-ին նոր խողովակաշար տեղադրելիս պայթացվել է մի ծավալուն ժայռաբեկոր, որի մի մասն էլ կազմել է հավանաբար պարսկերեն արձանագրությանը այդ քարը:

Հայտնաբերված բեկորից ոչ հեռու կառուցված մի քանի տասնյակ մետր ձգվող ջրատարի մնացորդներում տեսանելի են արձանագիր քարի կտորները: Հնում ջրատարը հավանաբար ունեցել է մի քանի կիլոմետր երկարություն՝ ջուր մատակարարելով մոտակա բնակավայրին կամ բնակավայրերին:

Ինչպես տեսանք, արձանագրությունը փորագրվել է պարսկերեն լեզվով այն դեպքում, երբ Արևելյան Հայաստանը շուրջ երեք տասնամյակ գտնվում էր Ռուսաստանի կազմում:

Սա կարող է հանդիսանալ մի ապացույց ևս, որ անգամ Արևելյան Հայաստանում ժողովրդի տիրապետության հաստատումից հետո տեղացի մահմեդական բնակչությունը և տեղական իշխանությունները մահմեդաբնակ բնակավայրերում գործածում էին պարսկերենը իբրև պաշտոնական գրագրության լեզու: Պարսից լեզվով պաշտոնական փաստաթղթեր էին թողարկվում ընդհուպ մինչև 19-րդ դարի վերջը<sup>2</sup>:

Այսպես, օրինակ, 1830թ.-ին (1245թ.-ին ըստ հիջրայի թվագրության) ըստ մի կալվածագրի, Դարաբենդի ոմն Ախունդ մոլլա Մոհամմադ Հասանը վաճառում էր Նորագյուղում գտնվող իր մեկ կտոր այգին նույն գյուղի բնակիչ Սկրտումի որդի Խաչատուրին 86 թուման գումարով<sup>3</sup>:



Սեկ այլ գրությամբ, ոմն Անդրեաս Օրբելիանովի 1872թ. հուլիսի 1-ին հաստատված շարի դատարանով խոսում է Փայիզի Աղչեչայի Յոն-ջալդի հողի մասին, որ կազմում է 20 ման յոնջայի ցանքատեղի Ալ Ջաֆարի հետ կիսովի ցանելու և բերքը կիսելու վերաբերյալ: Հակառակ կողմում դրված է Նախիջևանի մահանգի Ջահուկի գավառի ժուսական տեղական իշխանության կնիքը<sup>4</sup>:

Լեռնարոտ դժվարամատչելի գյուղը գտնվում է Կոշից 12 կմ հեռավորության վրա՝ Արագած լեռան լանջերին: Գյուղի ներկայիս բնակիչների մախնինները այստեղ են տեղափոխվել Արևմտյան Հայաստանի Մուշի և Սասունի Գեղիեզուզան, Հեթինք, Սպղանք և այլ գյուղերից 1915-18 թթ.<sup>5</sup>: Ըստ Լեռնարոտցի տարեց բնակիչների՝ գյուղում մինչև իրենց տեղափոխվելը ապրել են «պարսիկներ կամ քրդեր», որոնք մինչ այդ արդեն լքել էին գյուղը: Այսուհանդերձ, ավելի իրատեսական է ենթադրել, որ դրանք հավանաբար թյուրքալեզու են եղել:

Սինչև 1949 թիվը գյուղի անվանումը եղել է Մաղդա, սակայն նրա և շրջակա վայրերի բնակիչները մինչ այժմ գյուղի բնակիչներին կոչում են «մաղդեցիք»:

**A PERSIAN INSCRIPTION RELATING TO A CHANNEL NEAR LERNAROT  
VILLAGE,  
ARAGATSOTNS MARZ OF ARMENIA**

During 1980s the Expedition of the Institute of Archaeology and Ethnology of Armenia discovered an inscription in Arabic characters near an old channel not far from village of Lernarot, Aragatsotn marz of Armenia. We have travelled there to find the inscription and to study it.

As appeared it was a Persian inscription, probably mentioning the year of construction of a channel type construction – 1858 (1274 Hijri year). The formidable fact is that almost three decades after the incorporation of the Eastern Armenia into the Russian Empire the Persian language was used in epigraphic inscription. However, as appears, the Persian language still was used by Muslims living in Armenia as documentary language.

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Այս տեղեկությունը մեզ է հաղորդել այդ արշավախմբի անդամ հնագետ Հուսիկ Մելքոնյանը:
2. Պարսկագետ Քրիստինե Կոստիկյանի բանավոր հաղորդմամբ:
3. Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1 Ե. վավերագիր 771՝ նյութը տրամադրել է Քրիստինե Կոստիկյանը:
4. Կաթողիկոսական դիվան, թղթ. 1Ե, վավ. 815, բնագիր (հայերեն և պարսկերեն՝ շիքսաթե օրինակներով, 2 էջ). նյութը տրամադրել է Քրիստինե Կոստիկյանը: Տրամադրված նյութերի համար Քրիստինե Կոստիկյանին շնորհակալություն ենք հայտնում:
5. «Լեռնարոտ».- Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988: